ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2013-0-4 -Ա

ք. Երեւան 22.03.2013թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2013 թվականի մարտի 12-ի նիստում քննարկեց արտոնագրային հավատարմատար Սարգիս Կնյազյանի (այսուհետ՝ բողոքարկող) կողմից 2012 թվականի դեկտեմբերի 25-ին ներկայացված «CERAGEM» (հայտ N20111318) ապրանքային նշանի կրկնական փորձաքննության մերժման որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի հայտը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 106-րդ կետի 5-րդ մասի, 107-րդ կետի 14-րդ մասերի համաձայն, քանի որ որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը չի գրանցվել, քանի որ այն շփոթություն է առաջացնում հայտի ներկայացման թվականի դրությամբ նրա տարածքից դուրս օգտագործվող ամերիկյան «CERAGEM» ընկերության ապրանքային նշանի նկատմամբ, որը գովազդվում է (http://www.ceragem.com) ինտերնետային ցանցում և ներկայացնում է նմանատիպ ապրանքներ ինչի համար գրանցման է ներկայացված հայտարկվող ապրանքային նշանը:

Բողոքարկողը բողոքին կից ներկայացրել է տեղեկանք, համաձայն որի Ceragem Co. LTD ընկերությունը տալիս է իր համաձայնությունը, որպեսզի հայտատուն գրանցի հայտարկված ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու եւ կրկնական փորձաքննության մերժման մասին որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ՝ հաշվի առնելով այն, որ օրենքի տվյալ հոդվածը, որը հիմք է հանդիսացել ապրանքային նշանը մերժելու համար, չի պարունակում նման նորմ բողոքարկման խորհուրդ տեղեկանք ներկայացնելու դեպքում ապրանքային նշանը գրանցելու վերաբերյալ:

Խորհուրդը քննարկման արդյունքում պարզեց, որ բողոքարկողի կողմից ներկայացված տեղեկանքը բավարար չէ բողոքը բավարարելու համար:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Սարգիս Կնյազյանի կողմից ներկայացված «CERAGEM» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության մերժման որոշման դեմ բողոքը եւ կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

Բողոքարկման խորհրդի նախագահ Գ. Մելքոնյան